

ԲԺ. Գ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՏՂԱՄԱՐԴՈՒԽ ՍՈՒՍԱՆԱԿԵԼ

(ՏՐԻՊԵՐԸ)



616.9
8-38

ԹԵՂՄԱՐԴ

1939

ՑԵՐԵՎԱՆ

4 AUG 2010

616.9
ԲԺ. Գ. ՏԵՐ-ԴՐԻԳՈՐՅԱՆ

8-38

ար.

ՏՂԱՄԱՐԴՈՒ ՍՈՒՍԱՆ ԱԿԸ
(ՏՐԻՊԵՐՅ)



ՏՂԱՄԱՐԴՈՒ ՍՈՒՍԱՆԱԿԻ (արիպերը)

ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱՄՐԻ ՄԵջ մըս-
նում են յերեք տեսակ հիվանդություններ. սիֆի-
շիս, փափուկ շանկը և սուսանակ:

Սուսանակը զլխավորակես միզա-սեռական ուղի-
ների լորձաթաղանթների վարակիչ հիվանդություն է:

Սուսանակը մարդկության ամենահին հիվանդու-
թյուններից ե և ունի զանազան անուններ, վորոնցից
ամենատարածվածը «արիպեր»-ն է: Աղրբեջանցիներն
ու հայերն այդ հիվանդությանը «սուսանակ» անունն
են ավել: Ինչպես բոլոր վարակիչ հիվանդություն-
ները, այնպես ել սուսանակն ունի իր միկրոբը (ման-
րե), վորը գոնոկոկ ե կոչվում և միշտ կարելի յե-
կտնել սուսանակով հիվանդ տեղի թարախի մեջ:

Ինչպես բոլոր միկրոբները, գոնոկոկն ել ունի իր
հատկությունները. նա այնքան փոքր է, վոր հասա-
րակ աչքով տեսնել անկարելի յե, այլ կարելի յե տես-
նել միայն խոշորացնող դործիքով — միկրոսկոպով
(մանրադիտակ), մի գործիք, վորը մեծացնում է մին-
չել 1000 անգամ և ավելի: Այդքան մեծացնելուց
հետո ել գոնոկոկը ճանձի թողած հետքի մեծու-
թյան հազիվ և լինում:

Գոնոկոկը զույգ միկրոբ է, այսինքն նա կենտ չի
լինում և միշտ դասավորված ե կույտերով. յուրա-

271
40

Դ-ր Գ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ
Գոնոռեյ (триպեր) մայսինա
Գյզ. Արմ. ՀՀ, Երևան, 1939



քանչյուր դույգ զոնոկոկ սուբճի յերկու հատիկի ձեզ
ունի . գողավոր կողմը միմիանց դարձած և յերկու
բաժինը միմիանցից զատված նեղ ձեղքով :

Գոնոկոկները բաժան-բաժան լինելով շատ արագ
բազմանում են և , ընկնելով լրածաթաղանդի վրա ,
հիվանդություն են առաջ բերում :

Գոնոկոկները լինում են ավելի կամ պակաս թու-
նավոր , այսինքն կան այնպիսի զոնոկոկներ , վորոնք
ուժեղ են հիվանդացնում , կան և թեթև հիվանդաց-
նողներ : Գոնոկոկները թարախի մեջ պահպանում են
իրենց վարակիչ հատեռթյունը , քանի թարախը չի
չորացել , դոնոկոկները կենդանի յեն լինում , հենց վոր
թարախը չորանում է , գոնոկոկներն ել վոչչանում
են :

Գոնոկոկները չեն դիմանում չորությանն ու ջեր-
մությանը : Նրանք շատ լավ բազմանում են 30° - 37°
ջերմության մեջ , այսինքն մարդու մարմնի նորմալ
ջերմության մեջ : Գոնոկոկները մարդու մարմնից
գուրս 39° ջերմության մեջ վոչչանում են 12 ժամ-
վա ընթացքում , իսկ 40° ջերմության մեջ 6 ժամվա
ընթացքում , մինչդեռ մարդու մարմնի մեջ շատ լավ
դիմանում են բարձր ջերմությանը : Յեթև սուսանա-
կով հիվանդը տկարանում է մի այլ հիվանդությամբ
և յերկար ժամանակ բարձր ջերմություն և ունե-
նում , ինչպես որինակ , բծավոր տիֆով , թոքերի բոր-
բոքումով և այլն , սուր սուսանակի նշանները թու-
լանում են և յերեմն ել անհետանում , բայց հենց
վոր ջերմությունն իջնում է , հիվանդության նշաննե-
րը նորից հայտնվում են : Դա բացատրվում է նրանով ,
վոր գոնոկոկի կյանքի պայմանները մարդու մարմնի

մեջ և նրա մարմնից դուրս բոլորովին տարբեր են :
Մարդու մարմնի մեջ զոնոկոկները կյանքի , սննդա-
ռության , բազմանալու իմաստով շատ բարենպաստ
պայմանների մեջ են գտնվում , այդ պատճառով ել
նրանք կայուն են լինում :

Այսուհետեւ գոնոկոկները մարդու մարմնի մեջ շատ
լավ դիմադրում են զանազան գեղերի ներգործու-
թյանը : Մարդու մարմնից դուրս գոնոկոկները շատ
շուտ վոչչանում են ախտահանիչ դեղերի նույնիսկ
թույլ լուծույթներից , մինչեվ անդամ հասարակ ջրից ,
մինչդեռ մարդու մարմնի մեջ , չնորհիվ բարենպաստ
պայմանների , այդ բանը մենք չենք նկատում : Մար-
դու մարմնը վարակող գոնոկոկները շատ յերկար են
ապրում : Լինում են դեպքեր , յերբ հիվանդը կարծում
է , թե իր սուսանակը վաղուց անցել ե և բարոյա-
կան իրավունք ունի կենակցելու առողջի հետ : Սա-
կայն մանրամասնորեն կատարված քննությունը պար-
զում է , վոր այդ անձնավորությունը գոնոկոկներ ու-
նի և այն ել շատ վարակիչ : Ճիշտ է , ամեն սեռական
հարաբերության ժամանակ վարակում չի լինում ,
վորովհետև գոնոկոկների թիվը քիչ ե լինում , բայց
վոր կարող են նրանք վարակել , դա կասկածից դուրս
է :

Սուսանակը շատ տարածված հիվանդություն է
և անցնում է մեկից մյուսին — հիվանդից առողջին ,
դիմավորապես սեռական հարաբերության միջոցով :
Բայց կան դեպքեր , յերբ վարակումը լինում է ար-
տասեռական , այսինքն առանց սեռական հարաբերու-
թյան :

Դա մեծ մասամբ պատահում է յերեխաների մեջ ,

վորոնք վարակվում են իրենց հիվանդ մայրերից՝ նրանց հետ մեկ անկողնում քննելուց։ Վարակ պարունակող թարախը հիվանդ մորից ընկնում և նրա մոռաքնած յերեխայի սեռական որդանների վրա և վարակում նրան։ Յերեխան կարող է վարակվել և այն ժամանակ, յերբ վարակ պարունակող թարախութ չորով կամ նույնիսկ կեղտուոված մաշալկայով (ճիլոպով) լվանում են նրա սեռական որդանները։

Յեղել են գեպքեր, յերբ վարակվել են հիվանդի կեղտու սպիտակեղենը հաղնելուց։

Սուսանակով հիվանդ ծննդկան կինը շատ վտանգավոր է նորածին յերեխայի համար։ Ծննդաբերության ժամանակ հիվանդ մորից յերեխայի աչքերի մեջ կարող է ընկնել մոր սեռական ուղիների մեջ յեղած թարախը և մի քանի որից հետո նորածնի աչքերն ել սուսանակային հիվանդություն կստանան, իսկ այդ հիվանդությունը, յեթե ժամանակին չնկատեն և միջոցներ ձեռք չտանեն, սովորաբար կվերջանակությամբ։ Յարական Ռուսաստանում մինչ հեղափոխությունը յեղած տվյալների համաձայն մինչեվ մեկ տարեկան հասակը կուրացած 100 յերեխաններից 56-ը կուրացել ե սուսանակից, իսկ 44-ը՝ այլ հիվանդություններից։

Սուսանակային աչքացավով կարող են հիվանդանալ նաև սուսանակով այն հիվանդները, վորոնք սուսանակի թարախով կեղտուոծ ձեռքերով դիպչում են աչքերին և սուսանակի թարախն աչքին են փոխացում։ Պետք է լավ հիշել, վոր աչքերի սուսանակային հիվանդությունը սուսանակի ամենավտանդավոր բար-

գություններից մեկն ե, վորովհետեւ հաճախ կուրությամբ և վերջանում։

Շատ հիվանդներ կան, վորոնք սուսանակը հասարակ հիվանդություն են համարում, բժշկին չեն դիմում, տնային դեղեր են գործածում կամ զանազան հեքիմների յեն դիմում, յերկարացնում, ճգճգում են հիվանդությունը և այդ բոլորի հետեւլանքը լինում և այն, վոր սուսանակը չի բուժվում։ Դա դեռ բավական չե, շատ անդամ նման անզիտակից հիվանդները սեռական հարաբերություն են ունենում առողջների հետ, նրանց ել վարակում և հիվանդությունը տարածում։

Պետք ե չմասնալ, վոր սուսանակի վարակը ողի, ջրի, ուտելիքի, խմելիքի միջոցով չի տարածվում, այլ միայն ու միայն հիվանդների։ Հիվանդներն են տարածում այդ վտանդավոր հիվանդությունը։

Սուսանակը կանանց և տղամարդկանց մեջ տարածված է հավասար չափով։ Յեթե սուսանակը տղամարդու համար իր տված բարդություններով (տես ստորե) ծանր հիվանդություն ե, ապա կնոջ համար դա մի մեծ պատուհաս է։ Սուսանակի վարակն անցնում է կնոջ սեռական ներքին որդաններին՝ արգանդին, ձվարանին։ Այդտեղ սուսանակի միկրոբները՝ ըստոկոկները բազմանում են և ծանր հիվանդություն առաջնում։ Այդ հիվանդություններից կինը տարիներ չարունակ տանձգում է ու տառապում, իսկ յերբեմն ել մահանում։ Կանացի հիվանդությունների մեծամասնությունը լինում է սուսանակից։ Պետք է լավ հիշել, վոր չարյուր կնոջից, վորոնց ամսւսինները

յերբեւ հիվանդ են յեղել սուսանակով, 70-ը կա-
նացի հիվանդություն ունի:

Շատ հաճախ և պատահում, վոր յերիտասարու,
ծաղկափթիթ կինը ամուսնանալուց հետո շատ շուտ
սկսում և թառամել և մի քանի տարի չանցած հաշ-
մանդամ և դառնում: Դրա պատճառն այդ կնոջ ամուս-
նու չքժշկված սուսանակն է: Սուսանակով կարող են
հիվանդանալ թե վոքրահասակները և թե մեծահա-
սակները:

Սուսանակը ժառանգաբար չի անցնում. նա կա-
րող է բոլորովին զրկել ժառանգ ունենալու ընդու-
նակությունից (անս ստորև), բայց անցնել դեռ չծըն-
ված զավակին նա չի կարող:

Սուսանակով կարելի յե մի քանի անդամ հիվան-
դանալ. այսինքն սուսանակով մի անդամ հիվանդա-
ցողը կարող է ելի հիվանդանալ, վորովհետեւ մի
անդամ հիվանդանալը չի պաշտպանում յերկրորդ ան-
դամ հիվանդանալուց: Բացի դրանից, պետք է ա-
սել, վոր կան մի շարք պայմաններ, վորոնք նույս-
ուում են սուսանակով շուտ վարակվելուն:

Յերբ աղամարդու միզախողովակի բացվածքը
լայն է լինում, վարակը շուտ և ընկնում մեզախողո-
վակի մեջ և շուտ ել հիվանդացնում նրան: Յերբ ա-
սողը սեռական գործողությունը հիվանդի հետ յեր-
կար է տելում կամ դիտմամբ յերկարացվում է, դա
նույնպես շուտ վարակվելու պատճառ և դանում,
վորովհետեւ առողջը յերկար ժամանակ է չփոխում հի-
վանդի հետ:

Յերբ մինույն անձնավորության հետ սեռական
գործողություն են ունենում մի քանի անդամ և մեկը

մյուսի հետեւից, այդ դեպքում ևս կրկնակի սեռա-
կան հարաբերության չնորհիվ սեռական ուղիների
խորքում թագ կացած գոնոկաները դուրս են դա-
լլու և անցնելով առողջին, վարակում նրան:

Թագ կացած և թմրած գոնոկաները կնոջ դաշ-
տանի ժամանակ նորից սկսում են զործել և յերբ
դաշտանի ժամանակ հարաբերություն են ունենում
այդ տեսակ կնոջ հետ, շատ շուտ են վարակվում:
Մինչդեռ դաշտանից դուրս նույն կինը կաբող և չվա-
րակել:

Սուսանակով վարակվելուն ամենից շատ նպաս-
տում են խմիչքները: Դրա համար պետք է որենք
գարձնել հարած ժամանակ յերբեք սեռական հարա-
բերություն չունենալ. խմիչքները—գինին, կոնյակը,
ողին, զարեջուրը և այլն այնքան են թուլացնում խմո-
ղի կազմվածքը, վոր հարած մարդն այլեվս ուժ չի
ունենում դիմալբելու վարակին, շատ շուտ վարակ-
վում է: Բացի դրանից, հարթած ժամանակ կատար-
վող սեռական գործողությունը յերկար և տեսում,
այսինքն սուսանակով հիվանդի և առողջի շփումը յեր-
կար է տեսում, զրա համար ել շուտ և վարակում:

ԽԵԶԱԲ⁸ և ընթացում սուսանակը

Սուր սուսանակը սկսվում է հիվանդի հետ սե-
ռական հարաբերություն ունենալուց 3-5 որ հետո:
Սկսվող սուսանակի ամենաառաջին նշանն այն է, վոր
միզախողովակի բացվածքի աեղում հիվանդը քոր և
այրոց և զպում: Յեթե շատ ժամանակ է անցել մի-
զումից, կարելի յե լինում սեղմելով միզախողովա-
կից դուրս բերել վոքր քանակությամբ լորձային ար-
տազատում: Այդ նշանները շատ շուտ ուժեղանում

են, արտաղատումը շատանում ե, թանձրանում՝ դեպին գույնի լինում, դաւնում ե թարախային և հիվանդության սկզբից մեկ շաբաթ անց միզախողովակից անընդհատ թանձր, կանաչավուն-դեղին թարախ ե հոսում: Միզելու ժամանակ հիվանդն ամբողջ միզախողովակի մեջ խիստ այրոց ե զգում: Մեզի շիթը բարակում ե, խոկ յերբ հիվանդությունը շատ խիստ է լինում, մեզը նույնիսկ կաթիլ կաթիլ ե սասափկ ցավերով ե դուրս գալիս:

Սովորաբար հիվանդության այդպիսի ծանր դրությունը յերկար չի տեղում: Կանոնավոր բուժվելիս, ինչպես և կանոնավոր կյանք վարելիս ցավերը մի քանի որից հետո պակասում են, միզելիս նույնպես ցավերը քիչ են լինում, միայն թարախը նույն չափով ե գալիս. սակայն կանոնավոր և կարձատեվ բժշկվելիս, վարակումից մոտավորապես յերեք շաբաթ անց, միզախողովակից թարախը նկատելի չափով պակասում ե, լորձախառն թարախի փոխարեն լորձ ե հոսում: Հիվանդության սկզբից 5—6 շաբաթ անց արտազատումը միզախողովակից բոլորովին դադարում ե և հիվանդն առողջանում:

Այսպես ե լինում, յերբ հիվանդ ե լինում միզախողովակի միայն առջևի մասը, բայց յերբեմն հիվանդության սաստկությունից կամ հիվանդի վատ վարքից, միզախողովակի յետել մասն ել և հիվանդանում: Այդ ժամանակ հիվանդն այրոց ե զգում կոչ թե միզելիս, այլ միզելու վերջում, բացի դրանից, հիվանդը չուտ չուտ միզելու ցանկություն ե ունենում (միզել ե ուզում յուրաքանչյուր 10—15 բույեն մեկ անդամ): Աչա այդ նշանների հիման վրա կա-

րելի յե ասել, վոր միզախողովակն ամբողջապես հիվանդ ե: Յերբեմն արյուն ե հոսում միզելու վերջում:

Հիվանդին շատ են տանջում նաև անդամի դրգուումները, մանավանդ դիշերները: Այդ դրգուումները լինում են համառ և շատ ցավոտ: Յերբեմն հիվանդները գիշերային սերմնահոսություն են ունենում. այդ սերմնահոսությունները նույնպես ցավոտ են լինում և շատ անհանգստացնում հիվանդներին:

Վեր նկարագրված նշանները կամ շատ սասափկ են լինում կամ շատ թեթեվ, յերբեմն հիվանդությունն ընթանում ե շատ ուժեղ, յերբեմն շատ թույլ, խոկ այդ հանգամանքը կախում ունի հիվանդին վարակող միզրոբներից, այսինքն գոնոկոկների թունալիությունից. վորքան շատ թունալի յեն գոնոկոկները, այնքան ուժեղ ու այնքան ծանր ե ընթանում սուսանակը և ընդհակառակը:

Լինում են դեպքեր, յերբ արտազատումը միզուկից շարունակ հոսում ե և հիվանդությունը դառնում ե յերկարատեվ, կամ ինչպես բժշկներն են ասում, երբնիկ:

ԽՐՈՅԻԿ ՍՈՒՍԱԲԱԿ

Յեթե սուր սուսանակն իր ժամանակին չի բժշկվել, հիվանդության ուժգին նշանները մեղմանում են և սուսանակը խրոնիկ ե դառնում: Սուսանակի խրոնիկ դառնալու զլիավոր պատճառն այն ե, վոր գոնոկոկները վորոշ ժամանակից հետո անցնում են միզուկի լորձաթաղանթի տակը կամ մտնում միզախողովակի մեջ յեղած գեղձիկների մեջ:

Սուսանակի խրոնիկ դառնալու զլիավոր հանցան-

քը հիվանդի վրա յե ընկնում, նա յե մեղավոր, վոր սուր սուսանակը ժամանակին չի բժշկվում և դառնում է խրոնիկ: Ահա թե ինչումն է կայանում հիվանդի հանցանքը.

1. անկանոն բժշկվելը. կան հիվանդներ, վորոնք ուշադրություն չեն դարձնում իրենց բուժման վրա, կամ ամիսնելին չեն զիմում բժշկի, կամ անկանոն են հաճախում, մեկ որ գնում են, մի քանի որ չեն գնում.

2. հիվանդը խախոսում է կերակրականութ (դիետան), այնպիսի կերակուրներ ե ուտում, վորոնք նպաստում են զոնոկոկների բազմանալուն. այդ տեսակետից ավելի վնասակար են խմիչքները, մանավանդ գարեջուրը, վորը վնասում է հիվանդին, յերկարացնում է հիվանդությունը վոչ թե իր մեջ պարունակող սպիրտով, այլ դայլուկ (չմել) կոչվող նյութով, վորը միշտ զրկում է միզուկի հիվանդը բարձաթաղանթը և խանդարում հիվանդի առողջանալուն.

3. սեռական հարաբերությունը. կան հիվանդներ, վորոնք բժշկվելու ընթացքում, դեռ բոլորովին չբժշկված, սեռական հարաբերություն են ունենում առողջների կամ նույնիսկ իրենց նման հիվանդների հետ. սեռական հարաբերությունը վատացնում է յեղած հիվանդությունը, իսկ յեթե հիվանդի հետ է յեղել, նորից վարակում է առաջնում:

Խրոնիկ սուսանակի նշաններն են, միզուկից լորձյունաթարախային արտազատումը, այն ել փոքր քանակով: Յերբեմն արտազատման քանակն այնքան է քիչ լինում, վոր միայն շատ ուշադրությամբ զննելիս

է յերեսում. որինակ՝ առավոտյան կարելի յե լինում դուրս սեղմել մի փոքրիկ կաթիլ, վորը հավաքված է յեղել ամբողջ գեղերվա ընթացքում, կամ հիվանդը նկատում է, վոր իր միզուկի բացվածքն առավոտյան կպչում է, բացվածքի կպչումը բացատրվում է հետեւյալով. արտազատման այնքան քիչ ե լինում, վոր չուտ չորանում է բացվածքում և բացվածքի յեղերը կպցնում միմյանց: Յերբեմն այլ արտազատումն այնքան կպչուն է լինում, վոր մնում է խոզովակի մեջ և մեզի հետ դուրս ե գալիս, այսպես կոչված, թելիկների ձեմով. այլ թելիկները լաղկացած են լինում լորձից և թարախից:

Խրոնիկ սուսանակի ժամանակի սովորաբար ցալ չի լինում, յերբեմն հիվանդը քոր և զդում և միզուկը ել թելիկ այրոց:

Զնայած, վոր հիվանդության նշանները թեթել են, բայց և այնպիս հիվանդները գոնոկուկ ունեն և միշտ ել կարող են վարակել նրանց, ում հետ սեռական հարաբերություն ունենան: Ահա այդ տեսակ հիվանդներն են, վորոնք յերկար բուժվելու համբերություն չեն ունենում, միշտ ել հիվանդ են լինում և տարածում հիվանդությունը: Մինչդեռ յեթե նրանք բժշկվեյին, և ժամանակին բժշկվեյին, թե իրենք առողջ կլինեյին և թե ուրիշների վարակման և հիվանդանալու պատճառ չեյին դառնա:

Յուրաքանչյուր քաղաքացի պետք ե աշխատի չիվանդանալ, իսկ յեթե հիվանդացել է, պետք ե աշխատի բժշկվել, վոր աղատվի այդ ցավից և ուրիշներին ել չփարակի ու հիվանդությունը չտարածի:

Սուսանակի բուժման նպատակն եւ վոչնչացնել գոնկոկներին ու առողջացնել հիվանդին և քանի վոր հիվանդի մեջ գոնկոկներ կան նույնիսկ ամենաչնչն քանակով, այդ հիվանդին չի կարելի առողջացած համարել. ուստի յուրաքանչյուր քաղաքացի, ով վարկվել եւ հիվանդ ե սուսանակով, ամեն կերպ ոկտոք ե աշխատի և ամեն միջոց դործ դնի ազատվելու իր մարմնի մեջ մտած դոնոկոկներից:

Վորքան հին ե սուսանակ հիվանդությունը, այնքան ել հին ե նրա բժշկության դործը: Շատ հին ժամանակներում խմելու դեղերով եյին բժշկում սուսանակը և հենց վոր թարախահոսումը դադարում եր ու միզելիս ել ցավ չեր լինում, հիվանդն իրեն առողջացած եր համարում: Հետո սկսեցին զանազան դեղեր սրսկել միզուկի մեջ. հիվանդը գնում եր բժշկի մոտ. այս վերջինս դեղեր եր նշանակում սրսկելու համար, մի սրսկիչ ել տալիս եր հիվանդին և հիվանդն իրեն բժշկում եր տանը: Բայց տեսան, վոր այդ ձեվն ել ողուտ չի տալիս, հնարեցին սուսանակը բժշկելու «մեծ լվացումների» ձեվը:

Մեծ լվացումները կատարվում են անպատճառ բժշկի հակողությամբ: Բժիշկը հիվանդության տեսակին ու փուլին համապատասխան պատրաստում է պետքական դեղի լուծույթը և դրանով լվանում հիվանդի միզուկը: Այդ լվացումները կատարելու համար հատուկ սարք կա. ստատիվից կախված ե ապակե անոթ, վորի հատակին յեղած հատուկ ծայրին հաղցնում են ուետինե խողովակ. այդ խողովակի յերկարությունը պետք ե լինի 1 և կես մետրից վոչ պակաս. խողովակին ապակե ծայրակ են հաղցնում:

Անոթի մեջ վորոց լուծույթ լցնելուց հետո անոթը կախում են հիվանդից մեկ մետր բարձրության վրա և սկսում լվանալ հիվանդին. սկզբում լավ լվանում են անդամի զրոխ մասերը, հետո ծայրակը մոռեցնում են միզուկի բացվածքին և սկսում են լվանալ միզուկի առջևի մասը հեղուկի փոքր քանակով, վորքան վոր կարող ե պարունակել միզուկի առջեվի մասը: Առջեվի մասը լվանալուց հետո ծայրակն ամեն անդամ մոռեցնում են ու հեղուկը միզուկի առջեվի մասը լցվելուց հետո հետ քաշում, վորից հետո միզուկի մեջ մտած հեղուկը ինքն իրեն դուրս ե թափվում: Այդպիսի լվացումների ժամանակ թարախահոսումը շատ շուտ վերանում ե, թարախը պակասում, ցավերն անցնում են, մեզն սկսում պարզվել:

Բայց առջեվի մասը լվանալով միայն հիվանդությունը չի վերջանում, այսինքն գոնկոկները չեն վոչնչանում: Մի քանի որ անցնելուց հետո (նայած դեպքին, կարելի յե հենց առաջին որվանից) միզուկն ամբողջապես են լվանում. հեղուկը լցնում են միզափամփուշի մեջ և ստիպում հիվանդին դուրս թողնել: Այլպիսով ավելի լավ ե մաքրվում միզուկը: Մեկ նվազում միզափամփուշի մեջ հեղուկը լցնում են 2—3 անդամ ու առաջարկում հիվանդին դատարկել: Հեղուկի ճնշումը կանոնավորելու համար ապակե անոթը բարձրացնում են կամ իջեցնում: Պետք ե ասել, վոր գոնոկոկին մարդու մարմնի մեջ պահող դեղ մինչև այժմ բժշկական դիտությունը չի գտել. լվացումները վոչ թե սպանում են գոնոկոկներին, այլ նրանց ապրելու համար անբարենպաստ պայմաններ են ստեղծում միզուկի մեջ: Լվացում-

ների չնորհիվ զոնոկոկներն այլիս ուժեղ չեն զարդանում, չեն բազմանում և որեցոր պակասելով, վերջիվերջո միզուկից բոլորովին անհետանում են: Կարեք յեղած գեղքում բժիշկը խմելու գեղեր ել և նշանակում. այդ գեղերը նշանակում են ցավերի դեմ, միզուկի մեջ զանվող մանրեների դեմ, արյունհոսության դեմ և այլն: Բժշկը ինքը պետք ե վորոշի, թե վոր հիվանդին յերբ և ինչ խմելու դեղ և հարկավոր. յերբէք հիվանդն ինքնապէսիս վոչ մի դեղ չպետք ե ընդունի:

Այսպես բուժելուց 4—5 շաբաթ հետո, յերբ թարախը զարարում ե ու մեզն ել պարզվում, սկսում են որը մեջ լվանալ: 2—3 շաբաթ այդպես լվանալուց հետո առաջարկում են հիվանդին մի քանի որ չգալ. յեթե նորից թարախ և գալիս և մեզը նորից պղտորվում ե, պետք ե նորից սկսել լվացումները, բայց սովորաբար 5—6 շաբաթ լվանալը բավական և լինում հիվանդին բժշկելու համար:

Թարախի կարգելն ու մեղի պարզվելը դեռ ապացույց չե, վոր հիվանդը բոլորովին առողջացել և և նա վտանգավոր չե ուրիշների համար: Հաստատ իմանալու համար, թե հիվանդն առողջացել ե թե վոչ, բժիշկը մի քանի անդամ ստուգում ե հիվանդին. զանազան ձեղերով զրգուում ե միզուկը և արտազատումը դուրս բերում. յեթե այդ ձեզով մի քանի անդամ դուրս բերած արտազատումը քննելուց հետո զոնոկոկներ չփանվեն նրա մեջ, այն ժամանակ կարելի յե հիվանդին առողջացած համարել: Այդ տեսակ զրգուումից առաջացած արտազատումն առանց բժշկելու ինքն իրեն անցնում է:

Խրոնիկ սուսանակի բուժման ժամանակ նույնական մեծ լվացումներ են կատարում: Խրոնիկ սուսանակը զանազան ձերի յե ընթանում, հետեվագես և զանազան ձերի բժշկություն ե պահանջում: Խրոնիկ սուսանակի բուժումը յերկար ե տեվում և մեծ համբերություն ե պահանջում թե բժշկից և թե մանագանդ հիվանդից:

Խրոնիկ սուսանակի բուժման մասին պատմելը մեզ չատ հետուն կտանի, ուստի ավելորդ ենք համարում դրա վրա յերկար կանգ տանել: Միայն այսքանը պետք ե ասել, վոր յուրաքանչյուր հիվանդ պետք ե ժամանակին բժշկի, պետք ե լուրջ ուշադրություն դարձնի և թույլ չոտ, վոր հիվանդությունը իրոնիկ դառնա:

Սուսանակի բարգուրյունները



Մարդու մարմնի մեջ չկա մի մաս, վորտեղ չկարողանա ընկնել զնոնկոկը և չվնասել ու չքայքայել նրան և վարքան մարմնի մասը մեծ նշանակություն ունի մարդու կյանքի համար, այնքան ծանր և ընթանում այն մասի հիվանդությունը դոնոկոկից և այնքան վտանգավոր և մարդու համար:

Սուսանակի ամենից հաճախ պատահող բարգություններից մեկը մակամորձիների հիվանդությունն է:

Զվերի, ամորձիների հիվանդությունը սուսանակից չատ քիչ և պատահում. մեծ մասմբ հիվանդանում և ամորձուն կպած հալելուկը, վորը բժշկականության մեջ մակամորձի յե կոչվում և գտնվում

Ն ամորձուն կտած, նրա յետեվի կողմից։ Սովորաբար այդ բարդությունը նկատվում է հիվանդանալուց 3-4 շաբաթ անց։ Կան մի քանի հանգամանքներ, վորոնք նպաստում են զոնոկոկի մակամորձու մեջ ընկնելուն և հիվանդացնելուն։ Հիվանդի ուժեղ շարժումները, մանավանդ պարելը, հեծանիվ նոտելը, ձի նոտելը, սեռական զրգույնները, խմիչք զործածելը, սեռական հարաբերությունը, ինչպես և վոչ խելացի բուժումը։

Մակամորձու հիվանդությունը շատ բուռն կերպով և սկսվում։ Հիվանդի ջերմությունը խիստ բարձրանում է մինչև 39—40°. մակամորձին մեծանում է և սաստիկ ցավում։ Ցավերն ավելի ուժեղանում են, յերբ հիվանդը կանգնում է կամ քայլում ե։ Փոշտի (ամորձիների տոպլրակը) մաշկը կարմրում է և ուռչում, խիկ շոշափելուց մաշկը տաք է լինում։ Մեծ մասամբ հիվանդանում է ամորձիներից մեկն ու մեկը, աջը կամ ձախը, բայց լինում են և զետքեր, յերեկուն ել հիվանդանում են. խիստ ուռած, ցավոտ և հիվանդ մակամորձին գրկում և ամորձին վերեից, յետից և ներքեցից։ Հիվանդն աշխատել չի կարողանում և անկողին ե լնինում։

Մի քանի որից հետո, մանավանդ կանոնավոր բուժումից հետո, ջերմությունն իջնում է, ցավերն անցնում են, ուռուցքն իջնում և միայն մի փոքր կոշտացած տեղ է մնում հիվանդ մակամորձու մեջ։ Հիվանդը կազզուրփում է և անցնում իր աշխատանքին։ Մակամորձու հիվանդության հետեւանքն այն է լինում, զոր նրա մեջ սպիներ են զոյանում։ Այդ սպիները փակում են այն խողովակիների անցքը,

վորով սերմնյակներն ամորձուց սերմնատար ծորանով անցնում են զետի սերմնաբաշտիկը։ Խողովակիկների անցքի, սերմնյակների ձանապարհի վակման պատճառով, սերմնյակները յելք չլատելով, վոչնչանում են և ծծվում։

Յեթե մակամորձիներից մեկն է հիվանդացել, մյասը-ասողը կարող է իր զործը կատարել, իսկ յեթե յերկու մակամորձին ել հիվանդացել են, մանավանդ յեթե հիվանդացել և մակամորձիների վերին մասը, ապա ուրեմն հիվանդ տղամարդու սերմը զրբկում է սերմնյակներից, իսկ զրա հետեվանքը լինում է այն, զոր նման հիվանդ տղամարդը զրկվում է ժառանգ ունենալու լնդունակությունից։ Ում սերմի մեջ սերմնյակ չկա, նա չի կարող յերեխա ունենալ, և այս բանը լավ պետք է խմանան տղամարդիկ։

Սուսանակը ժառանգին չի անցնում, ինչպես ասել ենք վերը, բայց բարդանալով, զրկում է ժառանգ ունենալու լնդունակությունից, ամուլ և դարձնում։ Սուսանակն ազգաբնակության պակասելու գլխավոր պատճառներից մեկն է հանդիսանում, չնորհիկ այն բանի, զոր ամլություն և առաջացնում։ Յեթե ամուլնացած զույգը յերեխա չի ունենում, պատճառը հաճախ նրանց սուսանակն է լինում։ Անժառանգ ամուլնությունների հարյուր զետքից 67-ի պատճառը ամուլնացածների սուսանակն է։ Մակամորձու սուսանակային հիվանդությունը կանխելու համար հիվանդը պետք է պաշտպանի ամորձիները զրա համար հատուկ պատրաստված կապով, զորը հայերեն փոշտակալ, իսկ սուսերեն «սուսպենզորիյ» և կոչվում։ Այդ կապը հաղում են փոշտին և կապում փորի վրա,

բայց վոչ շատ ամուր, վորսկեսպի միզուկի յետեվի մասի մեջ յեղած հեղուկը կարողանա դուրս գալ: Ամուր կապելիս հեղուկը կկուտակվի միզուկի յետեվի մասում և այնտեղից ել միզափամփուշտի մեջ կընկնի ու նրան կվարակի: Հիվանդը պետք է զգուշ լինի ամեն տեսակի ուժեղ շարժումներից, մանավանդ սեռական հարաբերությունից և գրգռումներից, խմիչքներ չպետք և վորձածի:

Ցավող մակամորձու վրա սառուց չպետք է դնել, սոսնից յերակները կծկում են և ուսուցքը լավ չի ծծվում: Պետք են տաք վամթեթներ, տաք ջուր և այլ տաք բաներ դնել, թեև տաքից ցավերը սաստիանում են, բայց յերակները լայնանում են և ուսուցքը չուտ և ծծվում, սպի չի դոյանում, մակամորձիների խողովակիկների անցքը չուտ բացվում է, իսկ այդ անցքի բացվելը հենց բուժման նպատակն է լինելու:

Ցալերի դեմ խմելու կամ սրսկելու դեղեր են նշանակում կամ յերակի մեջ դեղ են սրսկում:

Սուսանակը ամուլ և դարձնում է կնոջը, յերբ դոնոկոկն ընկնում է կնոջ սեռական ներքին որդանները: Հիվանդությունից հետո ձվատար խողովակների մեջ սպիներ են դոյանում և վակում նրանց անցքը: Անցքի վակվելու պատճառով ձվարանից ձուն չի կարող մտնել ձվատար խողովակի մեջ, ինչպիս և սերմնյակը չի կարող միանալ ձվին միկնույն անցքի վակվելու պատճառով և դրա հետեվանքով լինում է կնոջ ամլությունը ու դարձյալ ժառանգից զրկվելը:

Կնոջ ձվարանների և ձվափողերի (ձվատար խողովակների) հիվանդությունն այնքան ծանր ու լուրջ

է ընթանում, վոր հիվանդի կնոջը պետք և անդառանձնու հիվանդանոցում բժշկել:

Տղամարդու միզուկի յետեվի մասը, նախքան միշտակամփուշտի հետ միանալը, անցնում է մի գեղձի միջով, վոր լստիներեն պրոստատա յե կոչվում, իսկ հայերեն՝ առաջապեղձ (կամ շաղանակաղեղձ):

Սուսանակի ժամանակ առաջապեղձը շատ հաճախ հիվանդանում է. սուսանակի բարգություններից մեկն ել առաջապեղձի հիվանդությունն է:

Միզուկի լորձաթաղանթից հիվանդությունն անցնում և առաջապեղձին: Հիվանդը շուտ շուտ միզելու ցանկություն և ունենում, ինչպիս նաև ուղղաձիգ աղիքի մեջ լցվածություն և շեքի մեջ ճնշում և զգում: Հետո հիվանդի ջերմությունը բարձրանում է, իսկ զեղձի մեծանալու պատճառով միզումը դժվարում է, մեղքը բարակ և զալիս և խիստ ցավերով: Կղւղիս ել հիվանդը ցավեր և վգում, վորովհետեւ կղանքը ճնշում և ուսուծ գեղձին: Հիվանդը շեքի և ուղղաձիգ աղիքի մեջ շաղափով ծակող ցավեր և զգում: Միքանի որից հետո ցավերը հետզհետեւ հանգստանում էն, զեղձի ուսուցքն սկսում է անհետանալ և լուրը նշաններն ել շուտ հանդարափում են:

Բայց լինում են զեղքեր, յերբ ցավերը շարունակում են ուժեղանալ. Հիվանդը մեկ կամ մի քանի որդիքա ընթացքում սկսում է սաստիկ դողալ և ուժեղ տաքացնել: Այդ նշանները ցույց են տալիս, վոր զեղձի մեջ թարախ է կուտակվել:

Նման գեղքերում հիվանդի զրությունը սաստիկ վատանում է, չերմությունը հասնում է 40° կամ ել ավելի, հիվանդը խիստ ուժասպառ և լինում, ուղղա-

ձիգ աղիքի և չեքի ցավերը դնալով ավելի ու ավելի յին սաստկանում։ Առաջարեղջի մեջ թարախակույտ ե դոյանում, վորը պատովիլու հակում և ունենում։ Ամենից հաճախ թարախակույտը պատովում և միզուկի մեջ։ Յերբեմն պատովում և ուղղաճիկ աղիքի մեջ, բայց սակավ դեպքերում պատովում չեքի կողմից։ Անկանոն բժշկվելու հետեւանքով թարախակույտի պատովելուց հետո հաճախ խվակներ են մնում և այդ խվակի միջով մեղք կարող և հոսել ուղղաճիկ աղիքի մեջ կամ դուրս դալ չեքի կողմից։

Թարախակույտի լավանալուց հետո գեղձի հյուսվածքը խիստ վնասվում է. դեղձի հյուսվածքի վնասվելուց կտրվում ե դեղձի հյութը և դրանից առաջ են գալիս սեռական հիվանդություններ, գլխավորապես ամլություն, այսինքն ժառանգ չի լինում, վորովհետեւ առաջադեղձի հյութն է, վոր կենդանություն ե տալիս սերմնյակներին։ Իսկ յերբ սերմի մեջ առաջադեղձի հյութ չկա, այն ժամանակ սերմնյակներն անկենդան են լինում. այդ հիվանդությունը կոչվում և անկենդան սերմնյակություն։ Վորովհետեւ կենդան սերմնյակներ չունեցող սերմը բեղմնալորել չի կարող, այդ պատճառով ել այդ տեսակի սերմ ունեցող տղամարդը միշտ ել ամուլ կլինի։

Առաջադեղձի բուժումը հերձում և մեծ լվացումներ ե պահանջում, իսկ թարախակույտը բժշկում են խիզուրգիական միջոցներով։

Սուսանակի բարդություններից ե նաև միզուկի անձկությունը, այսինքն նեղացումը։

Յերբ սուսանակը յերկար ե տեսում, միզուկի լորձաթաղանթն ոկում և կոչտանալ ու հաստանալ,

մորի հետեւանքով միզուկի անցքը նեղանում է։ Շատ հաճախ հիվանդը չի ել նկատում, վոր միզուկը նեղացել է և նկատում ե միայն այն ժամանակ, յերբ անձկությունը հասնում է վերին ստորինակի, յերբ դժվարությամբ ե միզում և մեղքի վիթը վոչ թե աղեղնաձեվ ե լինում, այլ կաթկթելով թափվում կոշիկների վրա։ Անձկության հետեւանքով կարող են շատ վտանգավոր բարդություններ առաջանալ։

Սուսանակով հիվանդը ժամանակին պետք է բժշկվի, վոր անձկություն չգոյանա, իսկ անձկություն յերեվալուց հետո պետք է կանոնավոր բժշկվել, վոր հետագայում ավելի ծանր բարդություններ չինեն։

Անձկությունը նույնպես կարող է խանդարել բեղմնավորմանը, վորովհետև սերմը դուրս թափելու փոխարեն լցվում ե միզափամփուշտի մեջ։ Անձկության դեպքում ամենից հաճախ միզափամփուշտն ե հիվանդանում։ Միզափամփուշտի մեջ թարախ և դոյանում, մեղք պղտորվում է, հիվանդը շուտ-շուտ և միզում։ միզելիս ցավերն աննշան են, բայց հաճախ միզությունը խիստ անհանդստացնում և թուլացնում է հիվանդին։

Յերե հիվանդը սկզբից յեվեթ ուշադրություն չդարձնի և ժամանակին չբուժի միզափամփուշտի սուր հիվանդությունը, այն ժամանակ հիվանդությունը կդառնա խիստիկ և դժվար բուժելի։

Սուսանակի ժամանակ կարող են վարակվել նաև յերիկամների ավաղաններն ու հենց յերիկամները։ Դրանք խոշոր բարդություններ են և հիվանդանոցային բուժում են պահանջում։

Ինչպես հայունի յե, սերմնյակներն անընդհատ գուրս դալով ամորձիներից, չեն տարածվում մարդու մարմնով կամ իսկույն գուրս չեն թափվում, այլ հավաքվում են նրանց համար հատուկ բշտիկներում, վորոնք տեղափարված են միզափամիսւշտի յետեռում նրա աջ ու ձախ կողմից և կոչվում են սերմնաբշտիկներ: Սուսանակի ժամանակ այդ սերմնաբշտիկներն ել կարող են հիվանդանալ և յերբեմն նույնիսկ թարսիակալել:

Սերմնաբշտիկների հիվանդությունը նման է տուածագեղձի հիվանդությանը: Բացի այդ, հիվանդը սեսային ուժեղ զրգուումներ և ունենում են սերմն արնաբան և լինում: Սերմնաբշտիկների հիվանդությունը վորոչելու համար մեծ հմտություն են պահանջվում, ուստի հիվանդը սկզբից յեփեթ պետք է լավ բժշկվի, վոր սերմնաբշտիկները չհիվանդանան, վորովհետեւ նրանց միջից գոնոկոկները շատ զժվար են անհետանում: Այդ և պատճառը, վոր սերմնաբշտիկների հիվանդությունը յերկար և տեսում:

Սուսանակի ծանր բարդություններից մեկն ել հոգատապն ե, այսինքն վոսկրախաղերի հիվանդությունը, վորը շատ նման է սովորական սեվմատիզմին:

Ներկայումս հաստատված ե, վոր գոնոկոկը կարող է լնդհանուր վարակում կամ միզուկից հեռու գտնվող մասերի հիվանդություններ առաջացնել: Գոնոկոկն, ընկնելով արյան մեջ, շրջադաշում և ամբողջ մարմնով և կանգ առած տեղում հիվանդություն առաջ բերում: Հենց այլպես ել վարակում են ու հիվանդանում վոսկրախաղերը կամ, ինչպես ասում են, հոգերը:

Հոդատապի նշանները: Հիվանդի ջերմությունը բարձրանում է, հիվանդ հողն ուռչում և և խիստ ցավում: Ցավերն այնքան սաստիկ են լինում, վոր հիվանդը հանգստություն չի ունենում, ստիպված անկողին և մտնում: Հիվանդը վոչ միայն աշխատել, այլ նույնիսկ շարժվել չի կարողանում և յերբեմն շարաթներ ու ամիսներ շարունակ մեխված և մնում մահակալին: Կանոնավոր չքժշկվելու դեպքում առաջնում և հողերի անշարժություն և հիվանդի ձեռք ու վոտքը այլանգակ տեսք և ստանում: Հողատապը լուրջ հիվանդություն և և հիվանդը հենց սկզբից պեսք և աշխատի, վոր նման բարդություն չստանա, իսկ բարդություն յերեվալիս բժշկի ինչպես հարկն է, վորպեսզի խեղանդամ չլառնա: Սուսանակի ամենածանր, բայց բարեբախտաբար ամենասակալ պատահող բարդությունը սրտի հիվանդությունն է, վոր միշտ ել մահով և վերջանում:

Ահա ինչ սարսափելի հիվանդություն և սուսանակը, վորը խիստ տարածված և թե տղամարդկանց և թե կանանց մեջ, ուստի և արժանի մեծ ուշացրության բոլորի կողմից: Հիվանդության հաճախակի յերկարատու ընթացքը, խրոնիկ ձեւ ստանալը, դանագան բարդությունները, վորոնք վոչ սակավ շատ ծանր են լինում, յերբեմն նույնիսկ վտանգվավոր կրանքի համար, տղամարդկանց ու կանանց ամլությունը, վորպես հետեվանք նախկին սուսանակի, հիվանդության քայլքայիչ արդեցությունը կնոջ առողջության վրա—այս բոլորը ցույց ե տալիս, վոր սուսանակը վոչ թե տեղական, վոչ վնասակար մի հիվանդությունն է, այլ մարդու ընդհանուր որգանիզմի լուրջ հիվան-

դություն, վորը պահանջում է վոչ միայն ուշադրությամբ վերաբերվել, այլև գիտակցորեն պայքարել նրա դեմ:

Վեներական հիվանդությունների դեմ լայն և նոր սկզբունքներով պայքարը սկսվել է միայն Հոկտեմբերյան Հեղափոխությունից հետո:

Առողջապահության կոմիսարիատները հատուկ հիմնարկներ են բացել—քաղաքներում դիսպահներներ և շրջաններում վեներական կետեր ու ջոկատներ, վորոնք և տանում են այդ պայքարը:

Ցարական Թուսաստանում վեներական հիվանդությունների դեմ, մասնավորապես սուսանակի դեմ, կազմակերպված պայքար չի տարվել:

Հոկտեմբերյան Հեղափոխությունից հետո Առողջապահության ժողովրդական կոմիսարիատի հետ կադմակերպվել են նաև վեներական հիվանդությունների դեմ պայքարող սեկցիաներ: Արտասահմանում վեներական հիվանդությունների դեմ պայքարի հիմնական ողակը մինչեւ այժմ ել մասնավոր բժշկի ընդունարանն է, իսկ մեղ մոտ՝ վեներական դիսպահները:

Վենդիսպահների դործունեյության հիմքն ե կազմում հայտնաբերել վարակի աղբյուրը և անվնաս դարձնել նրան, ընդգրկել բոլոր վեներական հիվանդներին և հաշվառման յենթարկել նրանց, հաշվառման յենթարկել վեներական հիվանդությունների տարածմանը նպաստող դործոնները և նրանց վերացման համար պայքարել համակատասխան կազմակերպությունների հետ միասին: Վեներական դիսպահները:

սուսանակով հիվանդները վորակյալ ողնություն են ստանում, դիսպահները հետեւ հիվանդների կանոնավոր բուժմանը, հետազոտության և յենթարկում հիվանդի ընտանիքի անդամներին, սանիտարական լուսավորության աշխատանք և կառարում հիվանդների և առողջների մեջ:

ԳԵԵԵՐԱԿԱՆ ԻԻՎԱՅՊՈՒԲՅՈՒՆԵՐԻ ՈՉ ԱՊՈԽԿՈՒԹՅՈՒՆԵՐԸ

Ամենքին ել լավ հայտնի յե, վոր պոռնկությունն ընդհանրապես շատ մեծ դեր է խաղում վեներական հիվանդությունների տարածման գործում: Բուժժուական այն ուսմունքին, թե պոռնկությունը բիոլոգիկ կարգի յերեվույթ է, մարքսիզմը հակառակն է ապացուցել, վոր պոռնկությունը տնտեսական կարգի յերեվույթ է: Պոռնկությունն առանձնապես խիստ զարգանում ե տնտեսական ճգնաժամերի և գործազրկության ուժեղ աճի ժամանակ: Զկա մի այնպիսի կապիտալիստական պետություն, վարտեղ չաճի պոռնկությունը, նրա հետ միասին և վեներական ախտերը: Իզուր չի ասված, վոր պոռնկությունն ու վեներական հիվանդությունները կապիտալիզմի անդավաճան ուղեկիցներն են: Կապիտալիզմի աճին հավասար ավելի ու ավելի յեն հարստանում անհատ կապիտալիստները և ավելի ու ավելի աղքատանում աշխատավոր մասսաները. իսկ զա նշանակում ե, վոր ավելի ու ավելի շատնում ե այն անձանց թիվը, վորոնք քաղցի ու կարիքի պատճառով ընկնում են պոռնկության դիրքը, հետեւապես ավելի ու ավելի յե

աղում պոռնկությունը և դրա հետ միասին ավելի ու ավելի մեծ չափով տարածվում վեներական ախտեց:

Վոր պոռնկությունը սոցիալական կարգի յերեւայթ է, դա ակնառու կերպով ապացուցվում է պոռնկության զարգացման պատճությամբ՝ ցարական Ռուսաստանում և նրա վերացմամբ՝ սոցիալիստական շնարարության ըրջանում:

Ներկայումս ԽՍՀՄ-ում պոռնկությունը վերացած է և խորհրդային առողջապահությունը ձեռնամությ յեղել նրա մնացորդների վերջնական լուծարքի պայքարին: Մեզ մոտ պոռնկությունը չի կարող ունենալ, վորովհետեւ Ստալինյան մեծ Սահմանադրության ձեռք բերած հաջողությունների ու նվաճումների հիման վրա իսպառ վերացել է գործազրկությունը մեր յերկրում, անհետացել պոռնկության պատճառ հանդիսացող քաղցն ու կարիքը, ստեղծել է յերջանիկ ու բերկրալի կյանք, վորտեղ յուրաքանչյուր քաղաքացի սովորելու, աշխատելու և զարգանալու հնարավորություն ունի:

ԽՍՖԽՀ-ում առաջին հնդամյակի ընթացքում սուսանակով հիվանդացողների թիվը պակասել է յերեք անգամ, սակայն սուսանակի անկման կորագիծն ավելի դանդաղ է իջել, քան սիֆիլիսինը, դա մասմբ բացատրվում է սուսանակի բուժման զործի հավագությով, համեմատած սիֆիլիսի բուժման մեծ հաջողությունների հետ:

Յեթե սուսանակով հիվանդանալու անկման թափը դիտենք սուր և խրոնիկ սուսանակի տեսանկյունով,

կաեսնենք, վոր Մոսկվայի վենդիսպանսերների վեճակադրության ավյալների համաձայն՝ Մոսկվայում սուր սուսանակը պակասել է յերկու անգամ, իսկ խրոնիկը՝ չորս: Այս հանգամանքը մեծ զործոն է հանդիսանում, վորովհետեւ սուսանակի տարածման մեջ ավելի մեծ դեր է խաղում խրոնիկ ձեվը, քան սուրը:

Իսկ յեթե համեմատելու լինենք վեներական հիվանդությունների թիվը մեզ մոտ և կապիտալիստական յերկրներում, կտեսնենք, վոր մեզ մոտ տարեցտարի հիվանդների թիվը պակասում է, մինչդեռ կապիտալիստական յերկրներում, ընդհակառակն, ավելի ու ավելի շատանում:

Յուրաքանչյուր քաղաքացի հենց վոր հիվանդանում է սուսանակով, պետք է իսկույն ևեթ սկսի լուրջ կերպով բժշկվել, վոր պոչառակի իրեն սուսանակի վտանգավոր ու ծանր հետեւանքներից, և վոր ուրիշներին ել չվարակի: Յուրաքանչյուր հիվանդ պետք է դիմի դիմացների կամ բուժարանի բժշկին և բժշկվի միայն ու միայն նրա մոտ և կատարի նրա տված բոլոր ցուցումներն ու խորհուրդները: Յուրաքանչյուր հիվանդ պետք է ձեռք առնի մի շարք նախագուշական միջոցներ, վորպեսզի պաշտպանի իրեն սուսանակի բարգություններից: Այս դեպքում մեծ դեր է խաղում առողջապահական կանոններին, ուստիիքի ու խմելիքի կանոններին հետեւիլը: Հսկայական նշանակություն ունի հանդիսանալը: Պետք է ասել, վոր այս հիվանդությունը պահանջում է անկողին դնել հիվանդին, վորովհետեւ այդ ձեվով սուսանակը չափազանց շուտ և վերանում:

Քանի վոր բոլորովվին հանգիստ մնալն անհնար ե, սետք և խորհուրդ տալ, գոնե, համեմատական հանդիստ ունենալ:

Հիվանդն աշխատանքից աղաս ժամանակ պետք է տանը մնա, հնար յեղածի չափ պառկի, պետք և խուսափի արագ քայլելուց, պարելուց, վազելուց, ձի նստելուց, հեծանիվ նստելուց և այլն: Մինչեվ բոլորվին առողջանալը, այսինքն մինչել թիւկը չափ, վոր հիվանդությունը լիովին անցել ե, սեռական հարաբերություն չպետք է ունենալ՝ նախ ուրիշներին չվարակելու և յերկրորդ՝ նրա համար, վոր սուսանակի ժամանակ սեռական հարաբերությունը շատ վատ և աղղում սուսանակի ընթացքի վրա, սուր կերպարանք և տալիս, նպաստում է բարդությունների առաջանալուն, հետեւապես և յերկարացնում է հիվանդությունը:

Շատ հիվանդներ կան, վորոնք հենց վոր հոսումը դադարում ե, կարծում են, թե սուսանակը լավացի ե, իրենց առողջ են համարում և սեռական հարաբերություն են ունենում: Դա շատ սխալ է: Հիվանդներից վոչ վոք իրավունք չունի իրեն առողջացած համարել, մինչեվ թիւկը չափ, վոր առողջ և մինչեվ թիւկը չափ, վոր նա այլիվս ուրիշն չի վարակի: Բացի սեռական հարաբերությունից, հիվանդը պետք է խուսափի այն ամենից, ինչ սեռական գրգռում և առաջացնում:

Մեծ նշանակություն ունի մաքրությունը. պետք և որական մի քանի անդամ ջրով, ավելի լավ է տաք ջրով լվանալ և մաքուր չորով սրբել սեռական որդանները:

Պետք է առաջին ուշադրություն դարձնել և հետեւել, վոր վարակը աչքերին չփոխանցվի, չմոռանալ, վոր դրանից կարելի յե կուրանալ, ուստի ամեն անդամ սեռական սրգաններին ձեռք տալուց հետո ինամբ քով լվանալ ձեռքերը ջրով և սապոնով:

Հիվանդության հենց սկզբից փոշտակալ հագնել: Պետք և խուսափի վրգուիչ կերակուրներից, թթու, կծու և աղի կերակուրներ չուտել, սոխ, սխոռը, մանանեխ, սղպեղ և այլ կծու կանաչեղեն չգործածել:

Գինի, ողի, կոնյակ, գարեջուր, մածար, ինչպես նաև մուգ թեյ, սուրճ չխմել: Ամենից լավ է խմել կաթ, ջուր և բաց թեյ:

Բայց այս բոլորից լավն ե՝ սուսանակով չհիվանդանալ և պաշտպանվել սուսանակով վարակվելուց: Նախքան սուսանակից պաշտպանվելու միջնոցների մասին խոսելը, ավելորդ չենք համարում յերկու իսուք ասել սեռական այն նախապաշտումների մասին, վորոնք նպաստում են սուսանակի տարածմանը: Յերիտասարդության մեջ այն սխալ կարծիքն է տարածված, վոր իբր թե առողջությունը պաշտպանելու համար պետք է յերեմն սեռական հարաբերություն ունենալ: Այդ սխալ կարծիքը պետք է խսպա վերացնել, վորովհետեւ սեռական ժուժկալությունը վոչ միայն յերիտասարդների համար, մինչեվ նրանց սեռական լիակատար հասունությունը, այլեվ մեծահսսակների համար միանգամայն անվնաս ե: Սեռական ժուժկալների Փիզիկական աշխատունակությունն ավելի բարձր է լինում. ներվաստենիան (ներվային հիվանդությունը) ավելի շատ և նկատվում զգայական

հաճույքներով տարվածների մոտ, քան ժուժկաների:

Շատ վտանգավոր են սեռական հարաբերությունները պատահական, անձանոթ կանանց հետ, մանավանդ, յերբ նման կանանց հաճախակի փոխում են: Վեներական հիվանդությունների զինակիցը խմիչքն ե: Սուսանակի և վեներական այլ հիվանդությունների տարածման զլխավոր պատճառներից մեկը հարբեցողությունն ե: Գինու և այլ խմիչքների ազդեցության տակ մարդ չի կարողանում իրեն հաշիվ տալ, թէ ինչ ե անում և ում հետ և սեռական հարաբերություն ունենում: Հարբած մարդը սեռական հարաբերություն ունենում այնպիսի պատահական կնոջ հետ, վորի հետ զգասա դրությամբ յերբեք չեր ունենա: Խմիչքները թուլացնում են մարդու որդանիքմը և հարբած մարդն ավելի շուտ և վարակվում, քան զգասար:

Ինչքան ել հեշտ և վարակվելը, բայց և այնպես կարելի յե պաշտպանվել ու կանխել հիվանդությունը, նույնիսկ, յեթե հիվանդի հետ և ունեցել սեռական հարաբերությունը:

Այդ տեսակ պաշտպանությունը կոչվում ե անձնական կանխում, այսինքն ամեն մարդ պաշտպանում է իր անձը վարակվելուց և այդ ձեվով 100 տոկոսով կարելի յե ապահովված լինել վարակվելուց ու հիվանդանալուց: Անձնական կանխման յերկու ձեվ կա: Ժեկն այն ե, վոր տղամարդը սեռական հարաբերության ժամանակ հատուկ տպարակ (կոնդոմ) և հագնում առնանդամին. այդ տոպրակը չի թողնում, վոր անդամը շփում ունենա հիվանդ կնոջ սեռական որ-

դանների հետ, միայն այդ տոպրակը չպետք է պատրս-վի և պետք ե անվնաս մնա մերձեցման ժամանակ: Նման ձեվով պաշտպանվելը միանգամայն աղահո-վում և վարակվելուց:

Յերկարորդ ձեվի նկատմամբ պետք ե ասել հետե-վալը. սեռական հարաբերությունից հետո անմիջա-պես կամ $\frac{1}{2}$ ժամ չափած միզել և սապնով ու տաք չըսով լվանալ առնանդամը՝ մաշկին կպած գոնոկոնիերը հեռացնելու համար: Հետո միզուկի առջեկի մասը լվանալ կալիյ պերմանգանատի թույլ լուծույթով, իսկ գրանից հետո դեղպիրով միզուկի մեջ կաթեցնել 20 տոկոսային պրոտարգովի զլիցերինյան լուծույթից մի քանի կաթիլ: Ինչպես ցույց են տվել գիտողու-թյունները, նման ձեվը շատ ճիշտ և հաստատ կեր-պով պաշտպանում ե հիվանդանալուց, նույնիսկ յերբ հարաբերությունը հիվանդի հետ և յեզել: Վորքան քիչ ժամանակ ե անցել կասկածելի հարաբերությու-նից, այնքան մեծ և յերաշխիքը, վոր չի հիվանդա-նա: Իսկ վորքան շատ ժամանակ ե անցել, այնքան դժվարանում ե հաջող յելքը: Բոլոր մեծ քաղաքնե-րում կազմակերպված են հասուկ կանխիչ կետեր, վորտեղ գիշեր-ցերեկ ընդունելություն կա և վոր-տեղ գործադրելով հիշյալ միջոցառումները, կանխում են սիֆիլիսով ու սուսանակով հիվանդանալը: Այդ-պիսի կանխիչ կետ կա նաև Յերեվանի Վենդիսպան-սերում, Լենինի փող. № 64, վորտեղ գիշեր ցերեկ, որվա բոլոր ժամերին ընդունելություն կա և ընդունե-լությունն, իհարկե, ձրի յե կատարվում: Ով ուզում է չիվանդանալ, ամեն անգամ կասկածելի հարաբերու-թյունից հետո պետք ե գիմել Լենինի № 64, բայց պետք

և շուտ գիմել, վոր միջոցառումները զուր չանցնեն:
Աւշացած դեպքում հիվանդությունը կանխիլ չի կո-
րելի, վորովհեակ զոնկոկները չառ շուտ են մըս-
նում լորձաթաղանթի խավի մեջ:

Քանի զոնկոկները լորձաթաղանթի մակելսալին
են, լվացումն ու պրոտրոզոլ կաթեցնելը կարող են ոգ-
նել, իսկ յերբ զոնկոկներն անցնեն լորձաթաղանթի
մեջ, այդ միջոցառումներն այլևս չեն ոգնի, չնա-
րավոր չի լինի հիվանդությունը կանխիլ. մի քանի
որից նշանները կերեքան և այդ ժամանակ պետք է
բժշկել վորպես արդեն հիվանդի:

ԲՈՒԺԵԼԻ[®] յե արգյօն սուսանակը

Սուսանակը մի այնպիսի հիվանդություն և, վորը
շատ հեշտ կարելի յե բուժել, միայն բուժումը պետք
է սկսել հենց սկզբից, հիվանդության նշանները յե-
րեվալու հենց առաջին որից և անպատճառ բժշկի
մոտ: Սկզբից յեվեթ չբուժելու դեպքում սուսանակը
խրոնիկ և դառնում, յերկար տարիներ տեկում, պահ-
պանում և իր վարակիչ հատկությունը և հետո բուժ-
ման շատ մեծ աշխատանք պահանջում:

Հիվանդը հեքիմներին չպետք է դիմի, տնային
միջոցներ չպետք է դորձադրի, չպետք և լսի իր ըն-
կերներին, վորքան կարելի յե շուտ սկսի իր բուժու-
մը բժշկի մոտ: Սուսանակի բոլոր դեպքերն ել միա-
տեսակ չեն բուժում: Բուժման մի ձեվը մեկին կարող
է ոգուտ տալ, իսկ մյուսնին՝ վնաս, միայն բժշկը
կարող է վորոշել, թե վոր հիվանդին ինչ տեսակի բու-
ժում և հարկավոր: Քիչ չեն այն հիվանդները, վո-
րոնք բուժվել են հեքիմների մոտ կամ ընկերների

աված խորհրդով և կարծել են, թե առողջացել են,
բայց հետո խիստ զղացել են, յերբ սուսանակը այն-
պիսի բարդություններ և տվել, վոր այլիս բժիշկն ել
անկարող է յեղել ողնել:

Վերջացնելով մեր դրքույզը, չենք կարող մի քա-
նի խորհուրդ չտալ ամուսնացողներին:

Քաղաքացիներ՝, գուք ամուսնանում եք և ընտա-
նեկան կյանք եք սկսում: Մտածեցեք հետեւյալի մա-
սին:

Առողջությունը մարդու ամենաբարձր բարիքն է.
դա մարդու անձնական և ընտանեկան յերջանկության
դրավականն է:

Առո՞ղջ եք դուք:

Յերբեքիցե չե՞ք հիվանդացել սուսանակով:

Գիտե՞ք դուք արդյոք, վոր ով մի անգամ հիվան-
դացել ե սուսանակով, բայց չի բուժվել ու կատա-
րելապես չի առողջացել, վարակել ե նույնիսկ այն
ժամանակ, յերբ հիվանդության վոչ մի տեսանելի
նշան չի յեղել վրան:

Գիտե՞ք դուք արդյոք, վոր չբուժած սուսանակը
շատ ծանր հետեւվանքներ ե տալիս տղաժարդուն: Կա-
նացի հիվանդությունների մեծամասնության պատ-
ճառն ե լինում և կնոջ համար մի կատարյալ ծանր
պատուհաս դառնում:

Գիտե՞ք, վոր ծաղկափթիթ աղջիկը ամուսնու-
թյունից մի քանի տարի անց ամուսնու չբուժված
սուսանակի պատճառով հաշմանդամ և դառնում:

Գիտե՞ք, վոր Քրեյական որենսդրքի 155-րդ հոդ-
վածը շատ խիստ պատժում է ուրիշն սուսանակով
վարակելու համար:

Պատկերացնո՞ւմ եք ընտանեկան կյանքի այն
գողբերգությունը, յերբ ընտանիքի մեջ սուսանակ և
ընկնում: Հիշեցեք, յերբեք հիվանդ չե՞ք յեղել:

ՅԵԲԵ յերբեմեն հիվանդացել եք սուսանակով,
սպարտավոր եք դալ բժշկի մոտ և հարցնել թե ամուս-
նանալու իրավունք ունի՞ք դուք:

Լավ իմացեք, վոր բավական-ե մի քանի ամսով
հետաձգել ամուսնությունը, վորակեզրի փրկվել սու-
սանակից և ալաշոպանել ընտանիքն այդ հիվանդու-
թյունից:

Պատ. խմբագիր՝ ՅՈՒՂԲԱՇՅԱՆ
ՏԵԽ. խմբագիր՝ Լ. Ահանյան
ԱՐՔԱԳՈՒՔԻՉ՝ Վ. Ավագյան



Գլանվելիսի լիազոր՝ կ.—1132. Հրատ. 4831

Պատկեր 226. Տիրաժ 2000

Թուղթ 62X94. Տպագր. 2 մամ.

Մեկ մամ. 25·600 նիշ.

Հանձնված ե արտագրության մարտի 2-ին 1939 թ.

Ստորագրված ե տպագրության համար նոյեմբերի 26-ին 1

Պետհրատի 1 տպարան, Երևան, Լենինի 65



ԳԻՒԾ 20 ԿՈՊ.

7386

Դ-ր Գ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ
Գոնոռեա (трипер) մужчина
Гиз. Арм. ССР, Ереван, 1939 г.